ՍԱՂՄՈՍ 67

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո գործերը փառաբանելու հորդոր ազգերին <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշ-տին, նգինոթի վրա, սաղմոս կամ երգ	Խնդրանք և դոքսոլոգիա	Գոհություն լավ հունձքի համար	Գովաբանության երգ	Հունձքի երգը
67:1-7	67:1-2	67:1-3	67:1-2	67:1-2
	67:3-4		67:3	67:3
		67:4-5	67:4	67:4
	67:5-7		67:5	67:5
		67:6-7	67:6-7	67:6-7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը, ինչպես Սաղմոս 65 և Սաղմոս 66, ունի տիեզերական տարր (տես՝ Սաղմ. 67:2,3,4,5,7, հտկպ.՝ Սաղմ. 67:2): ՅԱՀՎԵԻ նպատակն է՝

1. որ աշխարհը ճանաչի Նրան (Սաղմ. 67:2ա)
2. որ աշխարհը փրկվի (Սաղմ. 67:2բ)

Նա Իրեն հայտնում է Իր՝

1. ստեղծագործության գործերով
2. ընտրության գործերով (այսինքն՝ Աբրահամի և նրա սերնդի)
3. փրկության գործերով (այսինքն՝ հատկապես Ելիցը, Անապատում Դեգերելը, և գերությունից վերադառնալը)

4. այս գործերը արձանագրված են բոլորի համար, որպեսզի կարդան Սուրբ Գիրքը
5. հետագա գործերը՝ Մեսիայի խոստման և մարգարեության միջոցով

Բ. Այս Սաղմոսը առանձնահատուկ է ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԻ կիրառությամբ:
1. Աստծո գործերը
   ա. Աստված թող ողորմի, Սաղմ.67:1 – BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
   բ. Աստված օրհնի մեզ, Սաղմ.67:1 – BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
   գ. Աստված Իր երեսը փայլեցնի մեզ վրա, Սաղմ.67:1 – BDB 21, KB 24, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ
   դ. Աստված օրհնի, Սաղմ.67:7 – BDB նույնը ինչ բ. կետը
2. ժողովրդի արձագանքը՝
   ա-բ. ժողովուրդները փառաբանեն (երկու անգամ), Սաղմ.67:3 – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
   գ. ազգերը թող ուրախանան, Սաղմ.67:4 – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
   դ. ազգերը ուրախությամբ երգեն, Սաղմ.67:4 – BDB 943, KB 1247, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
   ե-զ. Սաղմ.67:3-ի կրկնությունը (այսինքն՝ ա-բ)

Գ. Ինձ շատ է դուր եկել Դերեկ Քիդների պատկերացումները: Նրա մեկնաբանությունը Ծննդոցի և Սաղմոսների շուրջ Թինդեյլ ՀԿ-յան շարքում օրհնություն է ինձ համար: Այս Սաղմոսի շուրջ մեկնությունների հենց սկզբում նա ասում է՝
   «Եթե մի սաղմոս երբևէ գրվել է Աբրահամին տրված խոստումների շուրջ, որ նա լինելու է թե՛ օրհնված և թե՛ օրհնություն, լավագույնը կլիներ հենց այս Սաղմոսը» (էջ՝ 254):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 67:1-7
[1]Աստված թող ողորմի և օրհնի մեզ,
Թող Իր երեսը փայլեցնի մեզ վրա: Սելա:
[2]Որպեսզի երկրի վրա Քո ճանապարհը ճանաչվի
Ու բոլոր ազգերի մեջ՝ Քո փրկությունը:
[3]Թող ժողովուրդները Քեզ փառաբանեն, ո՛վ Աստված,
Բոլոր ժողովուրդները թող Քեզ փառաբանեն:
[4]Ազգերը թող ուրախանան ու ուրախությամբ երգեն,
Քանի որ ժողովուրդներին արդարությամբ պիտի դատես
Ու երկրի ազգերին Դո՛ւ պիտի առաջնորդես: Սելա:
[5]Թող ժողովուրդները Քեզ փառաբանեն, ո՛վ Աստված,
Բոլոր ժողովուրդները թող Քեզ փառաբանեն:
[6]Այնժամ երկրի պտուղը կշատանա,
Ու Աստված՝ մեր Աստվածը, մեզ կօրհնի:
[7]Աստված մեզ օրհնելու է,
Ու երկրի բոլոր ծագերը Նրանից վախենալու են:

67:1 Սաղմոս 67:1 մի աղոթք է, որն ունի տիեզերական փրկության համուհոտ: ՅԱՀՎԵՆ ցանկանում է, որ Իր պատկերով ու նմանությամբ ստեղծված բոլոր մարդիկ (տես՝ Ծնն.1:26-27) վերականգնվեն Ծննդոց 3-ում Ադամի ու Եվայի ապստամբությունից ու մեղքից հետո Իր հետ փոխհարաբերության

մեջ: Ծնն.3:15-ի խոստումը ուղղված է բոլոր մարդկանց (Ծննդոց 12-ում մինչև Աբրամի կանչը դեռևս չի եղել Իսրայել):

Անկումից ի վեր մարդու ապականված «պատկերի» փրկությունը՝ վերականգնումը եղել է Աստծո անփոփոխ նպատակը (այսինքն՝ Եսայի 2:2-4, 45:22, 52:10, 56:7, Միքիա 4:1-2): Այն հստակ կերպով սահմանվում է հիմնական աստվածաբանական կանխաենթադրությամբ և աստվածաբանական կառուցվածքով:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>

❖ **«մեզ»** Ո՞վ է «մեզ»-ը (երեք անգամ Սաղմ.67:1 և Սաղմ.67:6բ, 7ա-ում): Թվոց 6-ից (այսինքն՝ Ահարոնի օրհնությունը) կարելի է ենթադրել Իսրայելն է (տես՝ Սաղմ.4:6), սակայն ուշադրություն դրաձրե՛ք մյուս համարներին:

1. ժողովուրդները, Սաղմ.67:3, 4բ, 5ա
2. բոլոր ժողովուրդները, Սաղմ.67:3, 5բ
3. ազգերը, Սաղմ.67:4ա
4. երկրի ազգերը, Սաղմ.67:4գ
5. երկրի բոլոր ծայրերը, Սաղմ.67:7բ

Աստված ցանկանում է բոլորի փրկությունը (տես՝ Հովհ.3:16-17, 4:42, Գործք 2:17, 1 Տիմ.2:4, 4:10, Տիտոս 2:11, 2 Պետ.3:9, 1 Հովհ.2:1-2, 4:9-10):

❖ **«Սելա»** Տես Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսների, Ներածություն, VII:

❖ **«Իր երեսը փայլեցնի մեզ վրա»** ՅԱՀՎԵԻ անձնական ներկայության և հաղորդակցության մասին օրհնության խոսքը սկիզբ է առնում Թվոց 6:22-27-ի Ահարոնի օրհնությունից: Այս նկարագրությունը հաճախ կրկնվում է Սաղմոսներում (տես՝ Սաղմ.4:6, 31:16, 80:3,7,19, 119:135):

67:2 «Քո ճանապարհը» Աստծո ճանապարհը նկատի ունի Նրա հայտնությունը: Տես <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ:</u> Ուշադրություն դարձրեք Սաղմ.16:11-ում աստվածաբանական զուգահեռը:

Սուրբգրային հավատքի աստվածաբանական հասկացությունը որպես ճանապարհ՝ ուղի, շատ կարևոր է (տես՝ Սաղմոս 1): Հիսուսն այդ նկարագրեց որպես դուռ և ճանապարհ (տես՝ Մատթ.7:13-27), անձնական հանդիպում, որին հետևում է Քրիստոսակենտրոն կյանք (տես՝ Հակոբոս 2:14-26): Ես ներառել եմ իմ մեկնաբանությունից գրառումներ Գործք 9:2-ից՝

Գործք 9:2 «Ճանապարհը» Սա հավատացյալների համար առաջին անուններից է եղել (տես՝ Գործք 19:9,23, 22:4, 24:14, 22 և հավանաբար 18:25,26): Այն ունի ՀԿ-յան հիմք, որը խոսում է հավատքի ապրելակերպի մասին (տես՝ Սաղմ.1:1, 16:11, 119:105, 139:24, Առակ.4:10-19): Հիսուսն այս գաղափարը գործածում է Մատթ.7:14-ում և Իր համար որպես անուն է գործածում Հովհ.14:6-ում: Քրիստոնեությունը անձնական հանդիպում է, որին հետևում է ամենօրյա փոխհարաբերություն:

❖ **«երկիր»** Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ:</u> Համատեքստն է որոշում իմաստը:

67:4 Այս համարը չի կարող բացասական լինել (այսինքն՝ միայն դատաստան), քանի որ Աստծո դատաստանը արդարության համար ազգերին համար կլինի՝

1. ուրախության առիթ
2. ցնծության երգի առիթ
3. Աստծով առաջնորդվելու առիթ

Գաղափարը, որ ազգերը Աստծով կառաջնորդվեն շատ ավելի կարևորություն է ստանում, երբ ուշադրություն են դարձնենք, թե քանի անգամ է (անցյալով, ներկայով և ապառնիով) այս տերմինը

(BDB 634) կիրառվում Իսրայելի համար (տես՝ 2 Օրինաց 32:12, Նեեմ. 9:12, Սաղմ. 5:8, 23:3, 31:3, 43:3, 73:24, 78:14, 53, 72, 107:30, 139:10, 143:10): Այժմ այս նույն առաջնորդությունը հասանելի է զոջացող, հավատացող, հեթանոս աշխարհին (տես՝ Երեմ. 16:19):

67:6 ՀԿ-ի ուխտերը խոստացել էին գյուղատնտեսական օրհնություն բոլոր այն մարդկանց համար, ովքեր հնազանդվում էին ուխտին (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-28): Այս համարը նկատի ունի ապաշխարող հավատացող խմբի երկրի վրա գտնվող մարդկանց խմբերի մեջ: Սա ունի էսկատոլոգիական շեշտադրություն:

Աստվածաշունչը սկսում է գյուղատնտեսական առատությամբ (այսինքն՝ Եդեմի Պարտեզը) և ավարտվում նույն նկարագրությամբ (Հայտնություն 21-22): Սա ակնարկում է, որ Աստծո և մարդկության համար փոխհարաբերության վայրը վերականգնված Եդեմի Պարտեզն է (այսինքն՝ մաքրված և վերականգնված երկիրը): Սա հնարավոր չէ իմանալ նկարագրություն է, թե՞ մարգարեություն:

Շատ գիտնականներ այս Սաղմոսը դիտարկել են որպես հունձքի օրհնություն՝ հիմնված հենց այս համարի վրա: Սակայն տիեզերական տարրերի առատությունը սա կասկածելի է դարձնում: Այս Սաղմոսը Աստծո ցանկության մասին է, որ բոլոր ազգերը գան Նրա ճանաչողությանը (տես՝ Սաղմ. 67:2) և հետևեն Նրան (Սաղմ. 67:4) և, դրա շնորհիվ լինեն օրհնված (Սաղմ. 67:6):

67:7 «Որ երկրի բոլոր ծագերը Նրանից վախենալու են» Սա «վախ» (BDB 431, KB 432) բառի կիրառությունն է ակնածանք, հարգանք, հարգանքի իմաստով: Այս տիեզերական թեման նաև սահմանվում է Սաղմ. 22:27 և 33:8-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ է ուղղված այս Սաղմոսը:
2. Ինչո՞ւ է Սաղմ. 67:2-ը աստվածաբանորեն այսքան կարևոր: Արդյո՞ք այս թեման բնորոշ է այս Սաղմոսին:
3. Բացատրե՛ք Սաղմ. 67:4 ձեր իսկ բառերով: Բացասակա՞ն է, թե դրական:
4. Արդյո՞ք երկինքը լինելու է վերականգնված երկիրը:
5. Արդյո՞ք այս Սաղմոսի վրա դրված աստվածաբանական շեշտադրությունը յուրահատուկ է Սաղմոսաց գրքին: